

„ANNUAL OF ARMENIAN LINGUISTICS“ (ՏԱՅ ԼԵՁՎԱԲԱՆՈՒ-
ԹՅԱՆ ՏԱՐԵԳԻՐՔ), vol. 2, 3, 1981, 1982, Cleveland, USA

1980 թ. Քլիվլենդի համալսարանի հրատա-
րակությունը (ԱՄՆ) լույս է ընծայել «Հայ լեզ-
վաբանական տարեգիրք» հանդեսի երկրորդ և
երրորդ համարները: Հանդեսի հրատարակու-
թյան հիմնական կաղամակերպիչն ու նախաձեռ-
նողը Քլիվլենդի համալսարանի լեզվաբանության
ամբիոնի վարիչ պրոֆ. Ջոն Գրեպինն է: Խմ-
բարդական հանձնաժողովի մեջ են մտնում ա-
կադեմիկոս Գ. Զահուկյանը՝ Սովետական Հա-
յաստանից, պրոֆ. Ռ. Շմիդտը՝ ԳՖՀ-ից, պրոֆ.
Բոլոնեզին՝ Իտալիայից և ուրիշներ:

Հանդեսի երկրորդ համարը (1981) սկսվում է
Ջ. Գրեպինի «Զեպրոպալիս» հոդվածով (Re-
duplicated Patterns in Classical Armenian),
որը նվիրված է դասական հայերենի կրկնավոր
արմատներ ունեցող բառերին: Հեղինակը նման
բառերից նախ առանձնացնում է այն շերտը, որը
ծագումով հնդեվրոպական է (թվով 21), այնու-
հետև՝ այն բառերը, որոնք կրկնավոր են եղել
հենց հնդեվրոպականում: Նա դրանցից ստույգ է
համարում միայն սիսեռ (*kiker-n) բառը և
փոքր-ինչ կասկածելի՝ կոկորդ բառը: Մեկ առ-
մեկ քննելով բոլոր բառերը, հեղինակը եզրա-
կացնում է, որ դրանցից շատերը կրկնավորու-
թյունը ձեռք են բերել նախահայերենում կամ ա-
վելի ուշ շրջանում և ընդհանրապես՝ հնդեվրո-
պական կրկնավորության դեպքերը դասական
հայերենում կամ թուլացել, կամ անհետացել են:
Մինչդեռ, ընդունելով, որ կրկնավորության երե-
վույթը հայերենում շատ տարածված է և զոր-
ծուն, հեղինակը հանգում է այն եզրակացության,
որ այն տարածվել է անատոլիական լեզուների
ենթաշերտային ազդեցության հետևանքով, և
հատկապես՝ խեթերների ազդեցությամբ: Հեղինա-
կը մասնավորապես նշում է Ն. Մկրտչյանի կա-
տարած աշխատանքը այս բնագավառում:

Հանդեսի այս համարում ստուգաբանական
հարցերը զգալի տեղ են զբաղում: Է. Հեմփի
հոդվածը նվիրված է հայերենում և վեց բառե-
րի ծագումնաբանական ճշգրտմանը, Յասանովի
հոդվածը՝ հայ. y-areay նաբեայ բառի ստու-
գաբանությանը: Հեղինակը փորձում է ճշգրի-

տել հնդեվրոպական նախաձևը և հաստատել
հնդույթաբանական նոր զուգաբանություն:

Իտալացի լեզվաբան Մորենո Մորանին հան-
դես է եկել «Հայերենը և խեթերենը» բավական
ծավալուն հոդվածով: Նա բնում է հայերենի,
խեթերենի, այլև անատոլիական լեզուների բա-
ռային զուգաբանությունները, բառակազմական
կաղապարները, ինչպես նաև բերականական
զուգաձևերը (մասնիկներ, ածանցներ և այլն):

Ջ. Վայտենբերգի հոդվածը նվիրված է
ընտանիքի բառի ստուգաբանությանը: Հեղինակը
մերժում է Մալխասյանի և Աճառյանի առաջար-
կած ստուգաբանությունը, ըստ որի բառը դիտ-
վում է որպես քնդ-ծին արմատներից բաղա-
դրված բառ, որի զեպրում առաջանում է ի-
մաստային անհամապատասխանություն. ունտո-
նին բառը նշանակում է «ներսում ծնված», այ-
սինքն՝ «ճորտ, որը ծնված է տիրոջ տանը»:
մինչդեռ հայերենի քնդ-ը նշանակում է «միա-
սին», «միջոցով», «փոխարեն», բայց ոչ
«ներսում»: Ելնելով իմաստային այդ անհամա-
պատասխանությունից, հեղինակը առաջարկում
է նոր ստուգաբանություն, ընտ-ը կապելով
հուն. ενδο «ներսում», հնդեվր. *endoN
խեթ. arda(n)? «մեջ, ներս» բառերի հետ,
որից բնականորեն ստացվել է ընտ ձևը:
*endV->*intV- (dn>tn և e>i):

Հետաքրքիր է նաև Գ. Մ. Հոբի (Արևմտյան
Գերմանիա) իմաստաբանական դասակարգմանը
նվիրված հոդվածը, որն ափսիս շատ կրում է
մեթոդաբանական բնույթ: Հեղինակը փորձում
է նորովի մեկնաբանել մի կողմից լեզվի ներ-
քին ձևի ու լեզվաբանական հարարակցու-
թյան հումբոլդտյան տեսությունը, մյուս կողմից՝
լեզվի ընդհանրաբանությունը (ունիվերսալիզմը):

Հանդեսի երկրորդ համարում հաղորդվում է,
որ Ջ. Վայտենբերգի նախաձեռնությամբ սկսվել
է հայ մատենագիրների աշխատությունների
միկրոֆիլմային հրատարակությունը: Արդեն հը-
րատարակվել են Հելսինկիի գլխավոր գրապա-
հոցում պահպանված 274 անուն գիրք, որոնցից

Լև՝ Շիրակացու, Մատթեոս Ուռալացու, Մխիթար Դոշի, Հաստիվերացու և այլ հեղինակների գործերը:

Հանդեսի այս համարում ղեռնկալած է նաև
Հելլենի (Հորանդիա) համալսարանի պրոֆեսոր
Ֆ. Կորտանդի հոգովածը, որը վերաբերում է
հայերենի խոնարհման համակարգի դիմավոր
վերջավորությունների ծագմանը:

Հանդեսի էջերում կարելի է կարգալ նաև երուսաղեմի համալսարանի դասախոս Մայքլ Սթոունի «երուսաղեմի հայկական արձանագրություններ» խորագրով հոդվածը, որտեղ բերված են երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի վիճակապատկերները՝ խաչքարերի և իրերի լուսանկարներով։ Տրված են նաև արձանագրությունների անգլերեն թարգմանությունները, ինչպես նաև մանրամասն քննված են բառերի բերականորեն անսովոր կամ սխալ ձևերը՝ իրենց մեկնաբանություններով։ Վերջում բերված է նաև արձանագրություններում հանդիպող հատուկ անունների ցանկը։

Հանդեսն ավարտվում է վերջին տարիներին լույս տեսած լեզվաբանական մի քանի աշխատությունների գրախոսականներով: Գրախոսված են Ա. Մելիքի «Հայագիտական աշխատություններ» (Երևանի Համալսարանի Հրատ., 1978, 822 էջ), Մարիա-Յրանցիական Բլտացեանուի «Հայերենի և դակո-մանական հարաբերությունները» (տպագրված Studia indoeuropaea ad dacorumanum pertinetia ամսագրում, II, Bucharest, 1980, p. 31—156), Անահիտ Հանեյանի «Տեղաբանական բարբառը» (Երևան, 1978), Դարիկո Կոստանդյանի «Եբրդնայի բարբառը» (Երևան, 1979), Մ. Միլոսայանի «Արեւելահայերենի բերականություն» (Caravan Books, Delmar, N.Y., 1981) գործերը, ինչպես նաև Առաջին միջնադարյան հայերենագիտական կոնգրեսի նյութերը (Խմբ. Ջ. Գրեպին, First international Conference on Armenian Linguistics, The Univ. of Pennsylvania, Delmar, N. Y. Caravan Books, 1980, p. 216).

Տարեգրքի 3-րդ համարում ղետեղված երկու հողվածները (հեղինակներ՝ Գ. Զահուկյան և Ի. Դակոնով) վերաբերում են հայերենի ակադեմական փոխառություններին, ընդ որում երկու հողվածներն էլ անգրադանում են ն. Մկրտչյանի «Հայերենի օրինաչափություններից նկատվող շեղումները» ակադեմիկոսի տվյալների լույս տակ» հողվածում առաջ քաշված ստուգաբանություններին:

Ակկադական փոխառությունները ընկելիս ԴՋահուկյանը առաջ է քաշում 3 նախապայամանք որոնք անհրաժեշտ է հաշվի առնել այդ փոխառությունները մյուսներից սահմանադատելու համար: Այդ պայմանները թերևս տարածելի են մյուս տիպի փոխառությունների վրա: Այսպես՝

վերջ է հանվեց.

1. պատահական գուգադիպություններ

2. փոխառությունները մյուս սեմական լեզուներից

3. միջնորդավարված փոխառութչուններ:

Պետք է նկատի առնվեն նաև պատմական պայմանները, որոնք հաստատում կամ հերքում են փոխառության ճշմաների հնարավորությունները:

Գ. Զահուլյանը նախ առանձնացնում է պատահական զուգահրյությունները, որոնք հանդիպում են մանկական և նմանաձայնական բառերում, այնուհետև այն բառերը, որոնք ունեն նոստրատիկ արմատներ կամ վաղ փոխառություններ են սեմական լեզուներից (ծով, արտ, ագարակ, դիրի, դուռն) և, վերջապես, անբրդադարձ է բուն ակկադական փոխառություններից, որոնց թվին է դասում՝ աճոր, կամն, կաշառ, կիր, կմախք, կնիք, կշիռ, բաղաք, բշտեմ, բուրմ, մաֆա, մաճկեռ (բրբ.), մաշկ, մզեմ, փածաճեմ, փոխ, սատար, շոր, տարի, բունիր, խոփ, խոր, խոռ բառերը:

Հաշվի առնելով ակադեմիկոսների գրային համակարգը, հեղինակը ենթադրում է, որ գրանց հընչությունները գրեթե լիովին համապատասխանում են հայերենին և առաջ է քաշում մի քանի ալբատոցաբանությունները. ագարակ, ագուտ, ալուր, աղաղ, անագ, աստևմ, բերդ, ձկտեմ, գագարն, հալալ, հուր, կորոդ, կուպը, պատառնեմ, տուրաձեմ:

Բ. Դյակոնովը նույնպես հանգամանորեն անդ-
րադառնալով Մկրտչյանի 100 բառից բաղկացած
բառացանակին, ցույց է տալիս գրանցում եղած
հիմնական անճշտություններ՝ խնամքով նշելով
այն բոլոր ստուգաբանությունները, որոնք առաջ
են քաշված Սևանայանի կողմից և որոնք վարդա-
րանություններ են գիտություն այդ բնագավառում:
Քննադատելով ն. Մկրտչյանի կողմից արված
ստուգաբանությունները, Դյակոնովը ցույց է տա-
լիս, որ դրանցում հաշվի չեն առնված իմաստա-
յին և հնչյունական կողմերը և մինչև իսկ հնդ-
եվրոպական ծագում ունեցող բառերը երբեմն
դիտվել են որպես ակադազական փոխառություն-
ներ: Դյակոնովն ապելի մանրամասն բացատրու-
թյուններ է տալիս տասնհինգ բառերի վերաբեր-
յալ: Այդ (հեղինակը համարում է) համարներ:

¹ Н. Мкртчян. «Отклонения» от закономерностей армянского языка в свете

данных аккадского языка — Историко-филологический журнал, 1979, № 4.

այդ բառի թափանցումը խոստիթերենի-ուրարտե-
րենի կամ իրաներենի միջնորդությամբ), զառ
(ընդունված է Աճառյանի կողմից առաջ քաշված
իրանական ծագումը), կնիք, ծառ, խուց, խոռ,
ծառ, կացին, նանե, սալուր, փշուր, փոխեմ:

Մեն հետաքրքրություն է ներկայացնում
Բրաունի համալսարանի դասական լեզուների
պրոֆ. Ուիլյամ Վյատի «Հայերենի և հունարենի
բառային զուգաբանությունները» ծավալուն հոդ-
վածքը (այս աշխատանքը հեղինակի դոկտորա-
կան դիսերտացիայի մի մասն է): Վյատն այն
կարծիքին է, որ թեև հայերենի և հունարենի
սերտ առնչակցությունն ընդունված փաստ է,
սակայն հայտնի չէ այդ երկու լեզուների մերձա-
վորության աստիճանը: Ինչպես հայերենը, այն-
պես էլ հունարենը հնդեվրոպական լեզուներ են.
երկուսն էլ ունեն որոշ քանակի ընդհանուր բա-
ռեր ինչպես մեկը մյուսի, այնպես էլ ուրիշ հնդ-
եվրոպական լեզուների հետ: Արդյո՞ք այդ երկու
լեզուները ավելի սերտ չեն կապված միմյանց,
քան մի որևէ այլ հնդեվրոպական լեզվի հետ:
Ինչպիսի՞ կապ է դա, ի՞նչ լեզվական ենթահա-
մակարգեր է ընդգրկում այն՝ բառային, հնչույ-
թային, թե՞ քերականական: Բառային համա-
կարգը ի վերջո արտացոլում է կուլտուրական
հարաբերությունները առնվազն այն իմաստների
բնագավառում, որոնք ընդհանուր են երկու լե-
զուներին:

Եթե հայերենը և հունարենը ցուցաբերում են
այդպիսի սերտ հարաբերակցություն, ապա՝

1) նրանք պետք է ծագած լինեն մեկ լեզ-
վից, որը առանձնանում էր ընդհանուր համա-
հնդեվրոպականից, կամ

2) այդ երկու լեզուները, կապված լինելով
միմյանց հետ, բիթ թե շատ կտրված էին մյուս
լեզուներից հնդեվրոպական համայնքում և կամ
կտրվել են հետագայում: Թվարկելով բոլոր հը-
նարավոր տարբերակները և բերելով դժապատ-
կներ, հեղինակը փորձում է որոշել հայերենի
և հունարենի ազգակցության աստիճանը:

Հայերենում կան մեծ թվով բառեր, որոնք ու-
նեն իրենց զուգաձևերը ինչպես հունարենում,
այնպես էլ մյուս հնդեվրոպական լեզուներում:
Դրանց թվին են պատկանում օրինակ՝ կենդանի-
ների անունները (եղնիկ, աղջ, շուն, մեղու, ու-
ջիկ), նյութական մշակույթի առարկաների ա-
նունները (տուն, դուռ, նավ) և շատ ուրիշներ:
Միևնույն ժամանակ՝ ապացուցելով հայերենի պատ-
կանելությունը հնդեվրոպական ընտանիքին, դեռ
չեն որոշում նրա մերձավոր ազգակցական կապը:
Այդ նպատակին կարող են ծառայել միայն այն
բառերը, որոնք բնորոշ են միայն տվյալ երկու
լեզուներին, կամ երբ դրանք առանձնանում են
ինչ-որ հատկանիշներով: Օրինակ՝ թվականների
համակարգը, 2-ից մինչև 10, որը մեծ մասամբ

պահպանվել է երկու լեզուներում: Հայերեն
‘ութը’ գալիս է թերևս *opto ձևից, և ոչ *okto-ից,
որից այն առաջացել է *septm ձևի ազդեցու-
թյամբ: Նույն փոփոխությունը տեղի է ունեցել
հունարենի էլիսյան բարբառում (որով, սակայն,
հայերենն ու էլիսյան բարբառը չեն մոտեցվում
միմյանց): Հայերենի ինն և հունարենի εννία
բառերը ունեն հնդեվրոպական ծագում և երկու
լեզուներում էլ դրանք ունեն հավելավոր ձայնա-
վոր, որը հաստատում է այդ երկու լեզուների
հնչույթաբանական կապը:

Հնդեվրոպական ընտանիքը, հավանաբար,
ունեն խիստ հայրիշխանական բնույթ և ընդգր-
կում էր գերդաստանի ավելի շատ անդամներ,
քան հայտնի է մեզ այժմ: Հայերը և հույները
այս տեսակետից մեծ փոփոխություններ չեն
կրել և իրենց լեզուներում պահպանել են այն-
պիսի բառեր, որոնք այլ լեզուներում բացակա-
յում են, և մինչև իսկ անսովոր են: Օրինակ՝
տալ (շալաշ), տալը (շաշո), եղբայրակիկ (εἰς τα-
τετρας), սկեսրալը (εἰς τὸς), նու (γυνή)՝ հարս:
Ահա այդպիսի հայ-հունարեն զուգաբանու-
թյուններին են պատկանում բավականին մեծ
թվով հնդեվրոպական բառեր, որոնք կարելի է
բաժանել որոշակի խմբերի: Այսպես, Վյատն
առանձնացնում է հետևյալ խմբերը.

1. Եղանակ ու ժամանակ ցույց տվող բառեր
(օրինակ՝ հայ. օր, հուն. ἡμέρα, օրվ — ἡμέρας,
ձյուն — χιὼν.

2. Մարմնի մասերի անվանումները (օձիք —
αὐχέν, ոկն — ὄστρον, երեսուցեք — ἑξακτὸς.

3. Մարդկային հարաբերություններ արտա-
հայտող բառեր՝ մարդ — ἄνθρωπος, ծնրույր — γέρων,
մորու — μητέρα, երեք — τρεῖς.

4. Նյութական մշակույթի առարկաների ա-
նուններ ու բնական առարկաներ՝ հայ. ոլոր, հուն.
ἄντρον, սյուն — στύβη, կամուրջ — γέφυρα, մար-
կիկ — μαρκαῖον, բառ — ἔκδοσις, աղբյուր — πηγή,
որոնցից շատերը երկու լեզվում էլ ունեն հավե-
լավոր ձայնավոր:

5. Բուսական աշխարհին պատկանող բառեր՝
հայ. կաղիկ, հուն. βάλανος, իւղ — ἔλαιον, վարդ —
ροζόν, սունկ — σκῆγγος, սրիկ — σκρίγγος.

6. Գենդանական աշխարհն ընդգրկում է բու-
յական մեծ թվով բառեր՝ հայ. այծ, հուն.
αἴζ, սովկես — σόκος, ցիկ — κύστις, լոր — χροῖς,
մալ — μάλα, բնիկը — ἐντερεα, որս — τέρη,
նովիլ — οἶος, հ. լ. *owis և երկու լեզվում էլ
ստեղծվել են նորարարություններ՝ գառն —
αρῆ, ասր — ασῆ, մոզ — μοζ, մոզի — μοζի.

Բերված օրինակները ցույց են տալիս, որ ընդ-
հանրությունները վերաբերում են խաշնարածու-

թյանը և տնային կենդանիների անուններին: Դրանք անշուշտ նպատահական զուգադիպություններ չեն:

Հեղինակը նշում է հայ-հունարեն հնչյունական և քերականական այն ընդհանրությունները, որոնք ամենայն հավանականությամբ պատահական չեն: Դրանց թվին է դասում ձայնավորի հավելումը շատ տարածված արմատներում.

1. *ner, այլ. հուն. $\pi\alpha\tau\epsilon\rho$ *nomn, անուն— $\pi\alpha\tau\epsilon\rho$

2. շատ տարածված -ano ածանցի առկայությունը ներկա ժամանակի բայարմատներում. օրինակ՝ 19-ան-իմ— $\gamma\epsilon\nu\alpha\tau\epsilon\sigma$

3. -n- ածականի առկայությունը. լվանամ— $\pi\lambda\upsilon\nu\omega$, հայ. ունկն հ. ե. *ous-n-tos

4. -ai-ածականի առկայությունը հոլովներում՝ հայ. կանայր, հուն. $\gamma\upsilon\nu\alpha\iota\chi\alpha\iota$:

Այս բոլորը ցույց է տալիս, որ հայերենն ու հունարենն ունեն շատ ընդհանուր գծեր, որոնցից հավելյալ ձայնավորը թերևս ենթաշերտի ազդեցություն է, իսկ բառակազմական տարրերի նմանությունը՝ ծագումնաբանական, ընդհանուր, համակարգային: Հեղինակը եզրակացնում է, որ հայերենի և հունարենի կապը ավելի սերտ է եղել և որ թե հայերը, թե հույները խոսել են մեկ լեզվի տարրեր բարբառներով և գտնվել են երկարատև շփման մեջ:

Համարում զետեղված է նաև Լ. Սարաջևայի «Հայ-սլավոնա-թուրքական մի նորարանության մասին» հոդվածը, որտեղ քննվում է դերբայական -լ (գրել, կարդալ) ածանցի զարգացումն ու տարածումը հայերենում, սլավոնական լեզուներում և թուրքերենում:

Հանդեսի այս համարում կարելի է կարդալ

ստուգաբանություններ՝ Շապաստակ, սուրհանդակ (Ա. Փերիսանյան), երեսփ, ասեղն, վառմ, լամսեան, բեղ և բետո-ծին (է. Հեմֆ) և իյխաւ (Ջ. Գրեպին) բառերի մասին:

Տպագրված է Վ. Շմալստիգի հոդվածը, որտեղ քննվում են հայերենի տրական-ներդոյական հոլովական վերջավորությունները ծագումնաբանական առումով՝ կապելով դրանք -um < և. *om(-), իսկ $\sigma\upsilon < *l-lo\upsilon$ ձևերի հետ:

Բանավիճական բաժնում զետեղված է Ջ. Գրեպինի հոդվածը՝ հայերենի անատոլիական ենթաշերտի վերաբերյալ: Այստեղ համառոտ ներկայացված են հարցի պատմությունը, տարրեր վարկածները:

Քննադատության և մատենախոսության բաժնում ներկայացված են՝ Ռուդիգեր Շմիտտի «Դասական հայերենի քերականություն» պատմահամեմատական բացատրություններով» աշխատանքը (R. Schmitt, Grammatik des Klassisch-Armenischen mit sprachvergleichen den Erläuterungen. Innsbruck, 1981, 8^o, 253 p.), «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր» ժողովածուն (Երևան, 1979), Ազաթանգեղոսի և Դրասխանակերտցու «Պատմություն հայոց» ֆաքսիմիլ վերահրատարակությունները (դասական հայերենի տեքստերի վերահրատարակման շարքից), հաղորդում «Հայերենի բարբառագիտական ատլասի» կազմման ուղղությամբ տարվող աշխատանքների մասին և Ա. Տերյանի մենագրությունը (Philonis Alexandri de animalibus), նվիրված Փիլոն Ալեքսանդրացու բիչ հայտնի աշխատանքներից մեկին:

Ա. Հ. ԽԱՉԱՏՅԱՆ

CLASSICAL ARMENIAN CULTURE. INFLUENCES AND CREATIVITY. Ed. Thomas J. Samuelian. — "Armenian Texts and Studies, № 4". University of Pennsylvania 1982.

Հույս տեսավ «Հայկական բնագրեր և ուսումնասիրություններ» մատենաշարի հերթական 4-րդ հատորը՝ «Հայ դասական մշակույթ» խորագրով, որը 1979 թ. Պենսիլվանիայի համալսարանում տեղի ունեցած միջազգային գիտական համաժողովում հրապարակված նյութերի վերանայված տարբերակն է: Բոլոր հոդվածները, ինչպես նշված է ենթավերնագրում, միավորում է մի ընդհանուր լեյտմոտիվ՝ ազդեցությունները և ստեղծարարությունը հայ մշակույթում:

Ժողովածուն բացում է ամերիկացի երիտասարդ հայագետ Ջ. Ռանլի «Ջրադաշտականության հարցերը Հայաստանում, Միհր և Վահագն» հետաքրքիր հոդվածը (էջ 1—17): Երանական ազդեցությունը հայոց հին հավատալիքների վրա ժամանակին հասուկ ուսումնասիրության առարկա է դարձել մասկիացի խոշոր իրանագետ բաբոն Ռ. Ռ. Շաակեյերգի հոդվածում, որը մասն-

ի Տե'ա Բ. Բ. Միշակելբեր. Об иранском влиянии на религиозные верования